Մարտին Գագիկի Թովմասյանի ԻԳ.00.04. - «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ 1991-2008թթ.» վերտառությամբ ատենախոսության մասին

Կարծիք

Պաշտպանության ներկայացվող ատենախոսության թեման արդիական է և կարևոր: Թեմայի կարևորության մասին առաջին հերթին վկայում է այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության հարաբերությունները շարունակական զարգացում են ապրում Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ: Երկու երկրների միջև հարաբերությունները զարգանում են ինչպես երկկողմ, այնպես էլ՝ բազմակողմ մակարդակներում: Գերմանիան հանդիսանում է առանցքային պետություն Եվրոպական միությունում, իսկ վերջինիս հետ Հայաստանի Հանրապետության համագործակցությունը ևս շարունակաբար զարգանում է: Վերջին տարիներին նաև Գերմանիան ավելացրել է իր քաղաքական ու տնտեսական ակտիվությունը Հարավային Կովկասումմ, ինչը ևս մեկ անգամ փաստում է ներկայացվող թեմայի արդիականությունն ու կարևորությունը:

Ներկայացվող աշխատանքը բաղկացած է ներածությունից, ենթագլուխներով բաժանված երեք գլուխներից, եզրակացություններից և աղբյուրագիտական բազայի տեսությունից: Աշխատության ներածական մասում հեղինակը սահմանել է հստակ նպատակ ու խնդիրներ, իսկ ուսումնասիրության մեջ անդրադարձել է յուրաքանչյուրին՝ տալով սահմանած հարցադրումների պատասխանները: Աշխատանքում հեղինակն անդրադարձել է Հայաստանի Հանրապետության ու Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև հարաբերություններն արտահայտող գրեթե բոլոր ոլորտներին՝ տնտեսական, քաղաքական և այլն: Ներկայացվել է նաև Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում կարևոր տեղ զբաղեցնող հարցերում՝ Ղարաբաղյան հիմնախնդրում, Հայոց Ցեղասպանության ճանաչման գործում

Գերմանիայի պաշտոնական դիրքորոշումն ու քաղաքականությունը: Ուսումնասիրության արդյունքներն ամբողջությամբ արտացոլված են եզրակացություններում: Դրանք հստակ են, համակարգված և բխում են ուսումնասիրության արդյունքներից:

Ներկայացված աշխատության ուժեղ կողմերից մյուսը օգտագործված աղբյուրագիտական բազան է: Հեղինակն օգտվել է աղբյուրների այնպիսի բազայից, որը հնարավորություն է տվել հիմնականում ամբողջական ձևով ներկայացնելու երկկողմ հարաբերությունների զարգացման ընթացքը: Հատկապես կարևորում ենք այն փաստը, որ հեղինակն օգտագործել է մեծածավալ գրականություն և աղբյուրներ գերմաներեն լեզվով: Այն հնարավորություն է տվել բացահայտելու նաև պաշտոնական Բեռլինի քաղաքականությունն ուսումնասիրվող հիմնախնդիրների վերաբերյալ:

Աշխատությունն աչքի է ընկնում նաև իր համակարգվածությամբ: Այն ունի հստակ կառուցվածք, տեխնիկական ու գիտական ձևավորված ապարատ: Աշխատության յուրաքանչյուր ենթագլխի սկզբնամասում հեղինակը սահմանում է իր հետազոտական հարցը/հարցերը, իսկ վերջնամասում տալիս է դրանց պատասխանները: Յուրաքանչյուր ենթագլխի վերջում հեղինակը տվել է ուսումնասիրված հարցի վերաբերյալ իր ամփոփումները:

Հեղինակի կողմից կատարված աշխատանքը փորձաքննության է ենթարկվել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ՝ Գերմանիայում: Մասնավորապես՝ Հայաստանում հրատարակված հոդվածների և մեկ կոլեկտիվ մենագրության տեսքով, ինչպես նաև Գերմանիայում տարբեր կոնֆերանսների և գիտական նստաշրջանների ժամանակ ներկայացված զեկույցներով:

Այնուհանդերձ, աշխատանքը զերծ չէ նաև որոշակի թերացումներից, որոնք ներկայացնում ենք ստորև.

1. Հեղինակն իրավացիորեն պնդում է, որ Գերմանիան՝ հատկապես 1990-ական թվականներին, Հարավային Կովկասի տարածաշրջանը դիտարկում էր միասնականության մեջ՝ չունենալով առանձնացված հայեցակարգային մոտեցումներ տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրի նկատմամբ:

Մյուս կողմից էլ պետք է շեշտել, որ եթե ԽՍՀՄ փլուզմանն անմիջապես հաջորդող շրջանում Գերմանիան առավել զսպված էր Հարավային Կովկասում, ապա 2000-ականներից հետո պաշտոնական Բեռլինի քաղաքականությունը որոշակիորեն փոխվել է՝ գրանցելով ակտիվության աճ: Այս թեզին առավել գիտական տեսք տալու տեսանկյունից առավել նպատակահարմար կլիներ օգտվել Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին քաղաքականությունը ձևավորող տեսական ու հայեցակարգային հիմքերից, ռազմավարական փաստաթղթերից՝ մասնավորապես դրանցում մեկնաբանելով այն մասերը, որոնք վերաբերում են Հարավային Կովկասին ու Հայաստանի Հանրապետությանը:

2. Կարծում ենք աշխատանքը կշահեր, եթե հեղինակն ավելի շատ օգտագործեր քննադատական-վերլուծական բովանդակություն ունեցող գրականություն: Մասնավորապես՝ փորձագիտական հանրույթի, ուղեղային կենտրոնների կողմից իրականացված հրապարակումները, հետազոտական-վերլուծական նյութերը: Դրանք հնարավորություն կտային հեղինակին առավել համապարփակ ձևով ներկայացնելու հետազոտվող հարցի վերաբերյալ տարբեր մասնագետների կողմից ներկայացվող կարծիքները, այսպես ասած՝ ներկայացնել նաև փորձագիտական դաշտի կարծիքը թեմայի վերաբերյալ:
3. Ինչպես արդեն վերը նշել ենք, հեղինակն օգտագործել է աղբյուրագիտական բավականաչափ մեծ բազա, այդ թվում՝ գերմաներեն լեզվով աղբյուրներ: Սակայն որոշ դեպքերում հեղինակը, օգտագործելով գերմաներեն լեզվով գրականություն, հղումներում չի ներկայացնում դրանք հայերեն թարգմանված տարբերակով: Կարծում ենք, որ հայերեն թարգմանությունը կնպաստեր ուսումնասիրված գերմանալեզու աղբյուրների ընկալմանն ու դրանց հանրայնացմանը:
4. Հեղինակը հետազոտությունն իրականացրել է բավականին երկար տարիների ընթացքում, իսկ աշխատանքի հղումներում տեղադրված որոշ էլեկտրոնային աղբյուրներ արդեն արխիվացված են: Ուստի տեխնիկապես

ավելի ճիշտ կլիներ, եթե հեղինակը նման աղբյուրների կողքին նշեր, թե երբ է օգտվել դրանցից:

Ամփոփելով վերոշարադրյալը, գալիս ենք հետևյալ հիմնական եզրակացությանը. նշված դիտարկումները հիմնականում արվում են առաջարկի տեսքով և միտում ունեն հեղինակի կատարած ուսումնասիրությունն առավել ամբողջական ու բազմակողմանի դարձնելու: Դրանք ոչ մի կերպ չեն նսեմացնում այն լայնածավալ ու կիրառական տեսանկյունից կարևոր աշխատանքը, որը կատարվել է: Հեղինակն ամբողջությամբ կատարել է իր առջև ի սկզբանե դրված նպատակն ու խնդիրները:

Հաշվի առնելով վերոնշված փաստերը, կարծում ենք, որ ներկայացվող աշխատանքը լիովին համապատասխանում է գիտական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին ու չափանիշներին, իսկ հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Գրախոսեց՝ Գրիգոր Բալասանյան

ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

Ստորագրությունը ճիշտ է՝ Մերի Հովհաննիսյան

ԵՊՀ գիտական քարտուղար